Հովհաննես Թումանյան

Պատվեր

Վանա բանտի խորքից ելած հառաչանք,
Ճիչ, աղաղակ բռնաբարված աղջկա,
Թալանվածի լաց ու աղերս, աղաչանք
Թե որ լսեք, ասացեք թե՝ բան չըկա:

Ամբողջ տարին արյուն-քրտինք աշխատող
Հայ գյուղացին թե որ լինի սովամեռ,
Կամ հուսահատ տանից կորչի հողից հող,
Գրեցեք թե՝ սաստիկ ցուրտ էր այս ձմեռ:

Թե կրակված հայոց գյուղի բոցերում

Վա՛յ կանչելով մարդիկ այրվեն կենդանի,
Հավատացրեք խաղաղություն է տիրում,
Ժողովուրդը կյանքն օրհնում է սուլթանի:

Բան է, թե որ (չի պատահիլ այդ իսկի)
Նահատակված հային մի բան տանք, ասեն,

Դուք հասկացրեք, իբրև ծանոթ այդ ազգի,
Որ ժամը չէ, հայերը դեռ տըհաս են:

Հայոց լեզուն Մեսրոպն իրան հետ տարավ,
Իսկ կրոնը մի աղանդ է զենդական...
Սպասեցեք, մինչև որ մեր սրտացավ

Խնամքի տակ լուսավորվեն, առաջ գան:

1891